Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ «ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովինարի Արծրուն Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տարրական դասարանի երկու ուսուցչի /13-ական դասաժամ/ թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակած հարցաշարի:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

-դիմում (Ձև 1),

-մեկ լուսանկար՝ 3X4 չափսի,

-բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

-անձը հաստատող փաստաթուղթ,

-«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում,

-ինքնակենսագրություն (Ձև 5),

-այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

-Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

-որակավորման տարակարգ ունենալու դեպքում (առկայության դեպքում),

-Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի ապրիլի 28-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգին համապատասխան՝ հաստատությունից դուրս մնալու դեպքում՝ կամավոր ատեստավորումից 60 և ավելի տոկոս արդյունք ցուցաբերած լինելու մասին տեղեկություն /մասնակցած լինելու մասին/, :

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից՝ 2025 թվականի օգոստոսի 18-ից մինչև օգոստոսի 29-ը ներառյալ, ամեն օր, ժամը 10-ից 16-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 2025 թ սեպտեմբերի 2-ին ժամը 14^{00}-ին ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովինարի Արծրուն Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոցում:

Հասցեն՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, Ծովինար համայնք, 1 թղմ., 3 փող., 33 շենք:

Տեղեկությունների համար զանգահարել 093-20-89-90, 094140205 հեռախոսահամարներով: